

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՄԵՋ

Այս տարի, Եկեղեցիներու Միութեան աղօթատոգոյններու յատկացուած ութ օրերը (18—25 Յունուար) երկու Կիրակիներու մէջև զուգադիպած ըլլալուն, արարողութիւններն ու Հանդիսութիւնները կատարուեցան ճիշդ իրենց որոշեալ օրերուն :

Կիրակի, 18 Յունուար, մեր Ս. Մննդեան ճրագալոյցի օրը, կէսօրէ առաջ, բիզանդական ծէսով պատարագ մատուցուեցաւ Պրանչիսկեաններու վանքի եկեղեցիին մէջ, Յոյն Կաթողիկոսներու Մեծաօրին կողմէ և խօսուեցաւ պատշաճ քարոզ : Բնական է որ Ս. Մննդեան տօնին առթիւ Հայեր չկարենային մասնակցիլ նմանապէս նոյն օր կէսօրէ ետք, Բեթղէհէմի կէս ճամբուն վրայ գտնուող ԹանՔուրի Էկումենիք կեդրոնին մէջ կատարուած միջ-Համայնքային աղօթատոգոյին :

Յաջորդ օր, Երկուշաբթի, 19 Յունուար, երեկոյեան ժամը Ծին, Լուսեականներու եկեղեցիին էր կարգը Հիւրընկալելու նմանօրինակ աղօթատոգոյ մը : Զանազան յարանուանութիւններէ բաղկացած կրօնական ու աշխարհիկ ժողովուրդ լեցուցած էր նորոգուած սրահը եկեղեցիին և մէկ ժամ տևող արարողութեան մը բնթացքին, զերմաներէն, անդլերէն և արարերէն լեզուներով եղան ընթերցուածներ ու աղօթքներ :

Ամենէն սրտագրաւ Հաւաքոյթներէն մէկը եղաւ Երեքշաբթի, 20 Յունուարի ժամը Ծին, Պրանչիսկեաններու վանքի եկեղեցիին մէջ կայացած աղօթատոգոյր, որուն մասնակցութիւն բերաւ նաև Ս. Աթոռիս երկսեռ երգչախումբը՝ զՊոլիս Երուսաղէմ գՏէրճի երգչոգութեամբ : Իսկ Հիւրարար Ս. Քաղաք գտնուող Ս. Ուխտիս Միարան և Միլանոյի Հոգ. Հովիւ Տ. Ժիրայր Վրդ. Թաճեան իր շնորհալի և բարձր ձայնով մեներգեց Վուրբ Աստուածճը : Անուանի երգեհոնահար Օկիւսթին Լամա նուագեց Պատի կրօնական երաժշտութիւնէն կտորներ : Եղան ընթերցումներ Փրանսերէն, իտալերէն, սպաներէն, անգլերէն, զերմաներէն և արարերէն լեզուներով, Ս. Գրական Հասուածներէ : Հանդիսութեան աւարտին, ներկաներէն իրաքանչիւրը իր մայրենի լեզուով արտասանեց Տէրունական աղօթքը :

Չորեքշաբթի, 21 Յունուար, քաղաքիս արևմտակողմը, Հրէական Թաղամասերու մէջ գտնուող Եթովպական եկեղեցին լեցուն էր այլատեսակ քրիստոնեայ Հաւատացեալներով, որոնք մէկ ու կէս ժամ ունկնդրեցին Եթովպական կրօնական երաժշտութեան ուրոյն Հրապոյրը, իր յաճախակի ու երբեմն անսովոր ելեկէններով :

Հինգշաբթի, 22 Յունուար, Սիոն լեռան Վերջին Ընթրիքի վերնատան մէջ էր Հաւաքոյթը, որ թէև կարճ՝ բայց տպաւորիչ եղաւ, կատարուած ըլլալուն այն վայրին մէջ՝ ուր Հաստատուած էր քրիստոնէական եկեղեցին, Պենտեկոստէի օրը : Յունաց ժառանգաւորաց երգչախումբը Հանդէս եկաւ Հոգեգալտեան մեղեդիներով, եղան ընթերցումներ յունարէն և լատիներէն լեզուներով՝ Ս. Գիրքէն, որմէ ետք բոլորն ալ խմբուեցան Ս. Հոգիի մատուռին մէջ, ուր անձնական խոկումի և խորհրդածութեան պահէ մը ետք բոլորը մեկնեցան Հոգեպէս լիացած :

Ուրբաթ, 23 Յունուար, մերն էր կարգը կազմակերպելու նմանօրինակ աղօթատողով մը, որ տեղի ունեցաւ երեկոյան մթնշաղիւն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի պլլազացող գունագեղ կանթեղներու ազօտ բայց խորհրդաւոր լլյսերուն մէջ:

Այս տարի, Ս. Աթոռիս վարչութիւնը կարգադրած էր որ արարողութեան մեծագոյն բաժինը բաղկանայ խաղաղական ժամերգութեան աղօթքներէն ու մեղեդիներէն: Մեծ պահոց օրերուն յատուկ այս ժամատապալութիւնը ունի ինքնատիպ շնորհ ու խորհրդաւորութիւն՝ հոգիները առնչող:

Լուսերականներու Երէց Փրօփոս Զէյմուս Կլաթթէ բացումը կատարեց դերմաներէն «Հայր մեր»ով: Մէջընդմէջ Հանդէս եկան Հայր Քլայվ Զէնսֆրըս՝ անգլերէն և Ֆրանչիսկեան Հայր Իկնադիօ Մանչինի՝ Ֆրանսերէն Ս. Գրական ընթերցումներով: Հօդը՝ Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գարեկեան, օրուան քարոզիչը, անգլերէն լեզուով ներկայացուց Հայ Ժողովուրդը իր մօտաւոր անցեալի արեւոտ գաղտնութեամբ ու քրիստոնէական եկեղեցիին իր բերած անգնահատելի մշակութային և այլ նպաստներով:

Ս. Աթոռիս երկսեռ երգչախումբին կողմէ երգուած քառամայն «Հայր մեր»էն ետք, Արշիմանտրիթ Քօրնէլլուս Ռօտուսաքիո յունարէն լեզուով փակումը ըստ յոյժ սրտադրաւ այս երեկոյթին:

Շաբաթ, 24 Յունուար, զանազան յարանուանութիւններէ անձեր, մասնաւորաբար կղերական, Ս. Յարութեան Տաճար իջնելով, մասնակցեցան Գողգոթայի վրայ պաշտուած Յունաց կիրակմուտքի Հսկման արարողութեան, վայելիլով բիւզանդական հոգեգրաւ մեղեդիները:

Եզրափակիչ հանդիսութիւնը տեղի ունեցաւ, ուրիշ տարիներու նման, Շմիթ Աղջկանց վարժարանին մէջ, Կիրակի, 25 Յունուարի երեկոյան: Որոշեալ ժամէն առաջ իսկ, ամէն սեռէ ու յարանուանութենէ բաղկացած բազմութիւն մը գրաւած էր սրահին թուր պթոնները:

Աղօթատողով մը ըլլալէ աւելի կրօնական համերգ մըն էր եղածը, որուն իրենց մասնակցութիւնը բերին յաջորդաբար Ֆրանչիսկեաններու, Յունաց Դպրեմանքի, Աւետարանական Լուսերականներու, Յոյն Աղաբ Ս. Յակոբ եկեղեցիի, Ֆրէրներու Երկրդ. վարժարանի, մեր երկսեռ երգչախումբի, Միթովպական (երկու սարկաւազներէ բաղկացած) և Բեթղեհէմէն ժամանած Սալէզիաններու երգչախումբերը: Մեր երգչախումբը կը զեկավարէր Ս. Աթոռի դպրապետ Պր. Սահակ Գալյաճեան: Հրանդ Սրկ. Շէրպէթեան մեներգեց «Մայրենի լեզու»ն: Տիկ. Նազիկ Պասմաճեան իր շնորհալի մայնով մեներգեց «Ղարաբաղի եղնիկ»ը: Իսկ երգչախումբը հանդէս եկաւ «Սուրբ սուրբ» և «Քրիստոս պատարագեալ» Ս. Պատարագի հատուածներու երգեցողութեամբ, որոնք խանդավառ ծափեր խլցին բազմահարիւր ունկնդիրներէն:

Գօլէճի տնօրէնը իր փակման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնելէ ետք հանդիսութեան թուր մասնակցողներուն, իր գոհունակութիւնը յայտնեց մանաւանդ էկումենիք այն օգիին, իրարհասակացողութեան ու համերաշխութեան այն մթնոլորտին մասին՝ որով տողորուած էին զանազան յարանուանութեան պատկանող անձնաւորութիւններ՝ ամբողջ շաբթուան մը ընթացքին, և որուն յարատուումով միայն կարելի պիտի ըլլայ իրականացնել փոխադարձ սիրոյ ու յարգանքի վրայ հիմնուած եկեղեցիներու մերձեցման ու ի վերջոյ միութեան գեղեցիկ հեռանկարը: